

## **Որպես IHSS տնային խնամքի ներկա կամ անցյալ աշխատողի կարգավիճակում լինելը, որը աշխատել է Լու Անջելես Վարչաշրջանի համար, կոլեկտիվ հայցը կարող է ազդել Ձեր իրավունքների վրա:**

*Այս ծանուցումը հաստատված է դատարանի կողմից: Սա փաստաբանի կողմից  
ներկայացվող միջնորդություն չէ:*

- Տնային խնամքի աշխատողը հայց է ներկայացրել Լու Անջելեսի Վարչաշրջանի («Պաշտպանյալի») դեմ, պնդելով, որ մինչև 2016 թվականի փետրվարի 1-ը մեկ աշխատանքային շաբաթում ավելի քան 40 ժամ աշխատած տնային խնամքի աշխատողները չեն ստացել լրացուցիչ աշխատաժամանակի վճարը և որ Պաշտպանյալը պատասխանատվություն է կրում:
- Դատարանը հաստատել է, որ հայցի մասին ծանուցումը տրամադրվի Տնային Աջակցող Ծառայությունների այն մատակարարներին, որոնք աշխատել են ԼԱ Վարչաշրջանում սկսած 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի փետրվարի 1-ը:
- Դատարանը որոշում չի կայացրել այս գործի վերաբերյալ ըստ էության և հետևաբար չի որոշել արդյոք ով է ճշմարիտ՝ Հայցվորը թե՛ Պաշտպանյալը: Հիմա առկա դրամ չկա և երաշխիք չկա որ այն կլինի: Այնուամենայնիվ, այս գործին մասնակցելու համար Դուք պետք է վերադարձնեք կից ներկայացվող համաձայնության վերաբերյալ մինչև 2020 թվականի ապրիլի 10-ը:

### **ԾԱՆՈՒՑՈՒՄ ԿՈՒԵԿՏԻՎ ՀԱՅՅԻ ՄԱՍԻՆ**

Լրացուցիչ աշխատաժամանակի մասին հայց է ներկայացվել Պաշտպանյալի դեմ: Դատարանը պայմանականորեն որակել է այս գործը որպես կոլեկտիվ հայց IHSS Տնային Խնամքի Մատակարարների կողմից, որոնք աշխատել են ԼԱ Վարչաշրջանում, և վճարվել են աշխատանքային շաբաթում քառասուն ժամից (40) ավելիի դիմաց՝ իրենց սովորական վճարի 1,5 անգամ պակաս՝ ցանկացած ժամանակ՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի փետրվարի 1-ը ժամանակահատվածում:

Հայցի շրջանակներում Հայցվորը պնդում է, որ Պաշտպանյալը ոչ պատշաճ կերպով չի վճարել մեկ աշխատանքային շաբաթում աշխատած 40 ժամից ավելիի դիմաց: Հայցվորը հակաճառում է, որ IHSS Տնային Խնամքի Մատակարարները պետք է վճարված լինեին մեկ աշխատանքային շաբաթում աշխատած 40 ժամից ավելի աշխատաժամանակի դիմաց: Պաշտպանյալը չի ընդունում Հայցվորի պահանջները, չի ընդունում, որ պատասխանատվություն է կրում Կալիֆորնիա Նահանգի կողմից որևէ ուշացման համար՝

լրացուցիչ աշխատանքային ժամանակի համար վճարման նոր կանոնների կիրառման առումով և չի ընդունում, որ այս ծանուցումը ստացող անձինք պայմանունակ են լրացուցիչ աշխատաժամանակի դիմաց վճար ստանալու համար: Դուք ստանում եք այս ծանուցումը, քանի որ Դուք պայմանունակ եք այս գործին միանալու համար՝ վերադարձնելով համաձայնության ձևը:

Դուք պայմանունակ եք այս գործին միանալու նույնիսկ, եթե Ձեզ ասել են, որ պայմանունակ չեք լրացուցիչ աշխատաժամանակի համար վճարվելուն:

SE HABLA ESPAÑOL Las oficinas de Nichols Kaster, PLLP tienen personal bilingüe en español. Por favor llame al 612-255-3360 ([ihss@nka.com](mailto:ihss@nka.com)).

**ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Միացյալ Նահանգների՝ Կալիֆորնիայի Կենտրոնական շրջանի Շրջանային Դատարանը պարզել է, որ նույնանման կարգավիճակում գտնվող աշխատողների մի խումբ կարող է գոյություն ունենալ և որ այս ծանուցումը պետք է տրամադրվի բոլոր անհատների, ովքեր կարող են հնարավոր պահանջներ ունենալ: Եթե Դուք աշխատել եք որպես IHSS Տնային Խնամքի Մատակարար կամ այլ նույնանման պաշտոնում 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի փետրվարի 1-ը ժամանակահատվածում է աշխատել եք լրացուցիչ աշխատաժամանակ, որի դիմաց չեք վճարվել սովորական վճարից մեկ ու կես անգամ ավելի, ապա Դուք պայմանուհի եք այս հայցին մասնակցելու: Դուք կարող եք միանալ հայցին՝ ուղարկելով Հայցվորի Համաձայնության Ձևը փոստով, էլ.փոստով կամ ֆաքսով հետևյալ հասցեով՝

**Nichols Kaster, LLP  
Attn.: Daniel S. Brome  
4600 IDS Center, 80 South Eighth Street  
Minneapolis, MN 55402  
Հեռախոս՝ (612) 255-3360 (այս համարը ֆաքս  
չունի)  
Ֆաքս՝ (612) 215-6870  
Էլ.փոստ՝ ihss@nka.com**

Դուք նաև կարող եք միանալ գործին՝ ստորագրելով էլեկտրոնային համաձայնության ձևը, որն առկա է <http://bit.ly/IHSSConsent> կայքում: Հայցվորի Համաձայնության Ձևը պետք է փոստով կամ էլեկտրոնային եղանակով վերադարձվի մինչև 2020 թվականի ապրիլի 10-ը՝ որպեսզի Դուք մասնակցեք: Եթե որոշեք միանալ այս գործին՝ լրացնելով Հայցվորի Համաձայնության Ձև, ապա Ձեր իրավունքները կներկայացնի Հայցվորի Փաստաբանը:

**ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ ՁԵՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ**

Այս կարգի հայցին մասնակցելով իրենց իրավունքներն իրականացնող աշխատողների հետապնդումներն արգելվում են օրենքով: Պաշտպանյալին արգելվում է իրականացնել IHSS Տնային Խնամքի Մատակարարների որևէ հետապնդում (ներառյալ ժամերը նվազեցնելը, վճարը կրճատելը, կատարողականի ոչ արդարացի գնահատականը, և այլն) այս հայցին մասնակցելու պատճառով:

ԱՅՍ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ  
ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ՝ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԿԵՆՏՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ, ՀԱՐԳԱՐԺԱՆ ՓԵՐՍԻ ԱՆԴԵՐՍՈՆԻ  
ԿՈՂՄԻՑ, ԴԱՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ ՉԻ ԿԱՅԱՑՐԵԼ  
ՀԱՅՅՎՈՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՍ ՊԱՇՏՊԱՆՅԱԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

**ՀԱՅՑՎՈՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎ**

1. Տալիս եմ համաձայնությունս՝ հայց ներկայացնելու Արդար Աշխատանքի Ստանդարտների մասին Օրենքի սահմաններում, ԱՄՆ Կալիֆորնիա Նահանգի Օրենսգիրք. Պարբերություն 201, և այլն՝ ընդդեմ Լոս Անջելես Վարչաշրջանի («Պաշտպանյալ») հատուցելու լրացուցիչ աշխատաժամանակի համար վճարը:
2. 2015 թվականին հունվարի 1-ից մինչև 2016 թվականի փետրվարի 1-ը ժամանակահատվածում եղել են դեպքեր, երբ ես աշխատել եմ շաբաթական 40 ժամից ավելի ԼԱ Վարչաշրջանում որպես IHSS Տնային Խնամքի Մատակարար կամ նույնանման պաշտոնում և չեմ ստացել պատշաճ հատուցում իմ աշխատած լրացուցիչ ժամերի համար:
3. Եթե այս գործը որպես կոլեկտիվ գործ չվարվի, ապա ես նաև համաձայնություն եմ տալիս միանալու ցանկացած դրանից բխող հայցի՝ պնդելու Պաշտպանյալի դեմ ներկայացվող այս պահանջները:
4. Հասկանում եմ, որ ցանկացած պահի կարող եմ չեղարկել համաձայնությունս՝ հայցը իրականացնել իմ պահանջներին համապատասխան՝ տեղեկացնելով գործը վարող փաստաբաններին:

Ամսաթիվ՝ \_\_\_\_\_  
Ստորագրություն

\_\_\_\_\_   
Անունը՝ տպագիր

**Ստորև ներկայացվող տեղեկությունները կապանձնավորվել Դատարանի գրառումներում: Խնդրում ենք տպել կամ տպատառ գրել:**

Հասցե՝ \_\_\_\_\_

Քաղաք, Նահանգի փոստային դասիչ՝ \_\_\_\_\_

Լավագույն հեռախոսահամարը(ները)՝ \_\_\_\_\_

IHSS Մատակարարի Համարը (հայտնի լինելու դեպքում)՝ \_\_\_\_\_

Էլ. փոստ \_\_\_\_\_

Այս ձևը ֆաքսով էլ.փոստով կամ փոստով ուղարկեք՝

Nichols  
Kaster, PLLP,  
Attn: Daniel S.  
Brome  
Ֆաքս՝ (612)

215-6870

Էլ. Փոստ՝ [ihss@nka.com](mailto:ihss@nka.com)

Հասցե՝ 4600 IDS Center, 80 S. 8th Street, Minneapolis, MN 55402

Կայք՝ [www.nka.com](http://www.nka.com)

Պետք է վերադարձվի մինչև սույն ամսաթիվը կամ սույն ամսաթվին՝  
10

2020 թվականի ապրիլի